

07.02.2014 14:32



Փետրվարի 6-ին lurer.com կայքը հրապարակել է հոդված՝ 'Սկանդալ հայկական դատաիրավական համակարգում. փաստաբանը դատավորին փորձել է պարտավորեցնել հայհոյանքով (ֆոտո. 16+)' տեղեկություն: Այսօր՝ փետրվարի 7-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Ռուբեն Վարդազարյանը դիմելով ՀՀ փաստաբանների պալատին տեղեկացրել է, որ 2014թ. հունվարի 21-ին դատարան է մուտքագրվել Էդուարդ, Աննա, Կարինե Սահակյանների լիազորված անձ՝ Գևորգ Սամվելի Հարությունյանի հայցադիմումը: Հայցադիմումի չորրորդ էջում օգտագործվել է սեռական բնույթի հայհոյանք, իսկ հայցադիմումը ստորագրված է «Գ.Հարությունյանի» կողմից:

Հիմք ընդունելով լրատվական կայքի տեղեկատվությունը և Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Ռուբեն Վարդազարյանի դիմումը ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը որոշում է կայացրել կարգապահական վարույթ հարուցել **փաստաբան Գևորգ Սամվելի Հարությունյանի (արտոնագիր N1457) նկատմամբ հետևյալ պատճառաբանությամբ.**

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:**

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:**

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4 որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ **Կանոնագիրք**) համաձայն՝

**2.2.1 Վստահության վրա հիմնված հարաբերությունները կարող են գործել միայն այն դեպքում, եթե փաստաբանի**

**հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը կասկածի տակ չեն առնվում: Փաստաբանի համար այս ավանդական արժեքները մասնագիտական պարտավորություններ են:**

**2.2.2 Փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն):**

**2.2.3 Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:**

**4.1. Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:**


Հարկ է արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Բեռնել որոշումը


## Առաջարկվող նորություններ



**20.09.2013** ՀՀ ՍԴ նախագույն  
ԳԱԳԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ  
ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՀՀ ՓՊ  
ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ  
ԶՈՀՐԱԲՅԱՆԻՆ



**25.10.2013** ՌՈՒՍԱՍՏԱՆԻ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ  
ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ  
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ  
ՆԱԽԱԳԱՀԻՆ



**23.10.2013** ԱՐԱ  
ԶՈՀՐԱԲՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ  
ԱՄԵՐԻԿՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ  
ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ  
(ABA/ROLI) ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ  
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ  
ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈՒԲՅԱՆԻ ՀԵՏ



**18.10.2013** ՀՀ ՓՊ  
ՆԱԽԱԳԱՀԻ 17.10.2013թ  
«ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԵՎ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳԾՈՎ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ  
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ  
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
N11-Ա ՈՐՈՇՈՒՄԸ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })